

«ԵՐԵՎԱՆԻ ԱԼՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ ԱՆՎԱՆ Հ.21 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
ԱՐՈՒՍՅԱԿ ԺՈՁԵՖԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն	2
Ներածություն.....	3
1.Ուսումնական հաստատության գործունեություն.....	8
1.1 Հաստատության ուսումնական միջավայր.. ..	8
1.2 Ուսումնական հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կա- ռավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	19
1.3 Ուսումնական հաստատության ենթակառուցվածքներ (մարդկային ռեսուրսներ և հնարավորություններ, ՏՀՏ տեխնոլոգիաներ և կիրառվող նորարարություններ).....	22
2. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր.....	54
3. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրներ	62
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողու- թյունների և միջոցառումների ժամանակացույց	65
5. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ	87
6. Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմներ	91
7.Դպրոցի զարգացման ծրագրում օգտագործված հասպավումներ	109

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Դարեր ի վեր կրթությունը Հայաստանում եղել է ազգի ինքնության և ժառանգության կարևոր մաս: Այն եղել և մնում է պետության համար առաջնահերթություն՝ որպես երկրի կայուն զարգացման և առաջընթացի ապահովման շարժիչ ուժ:

Կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի ազգային, հոգևոր և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Ժամանակի մարտահրավերների պահանջով պետությունը մշակել է զարգացման կայուն մոտեցումներ՝ ուղղված կրթության մատչելիության, որակի և հավասարության ապահովմանը: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակն է ունենալ քաղաքացի, ով ուսումնառության ավարտին կունենա գիտակցություն կարևորելու գիտելիքը որպես հետագա կյանքի պլանավորման հիմնաքար, կկարողանա ճանաչել իր ուժեղ ու թույլ կողմերը, ճիշտ կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, հետևել հասարակական համակեցության կանոններին և նորմերին, գնահատել իր և ուրիշների կարծիքը, դրսևորել կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ, ինքնուրույն մղվել ինքնակրթության, համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, ընդունել սեփական առանձնահատկությունները, կարևորել ազգային և համաշխարհային մշակույթը, պատմությունը, լինել հայրենասեր և ազգասեր:

Այսպիսով՝ կրթությունն անհատի բարեկեցության և պետության ամրապնդման հիմքն ու գրավականն է:

Երևանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոցի 2023-2028թթ. զարգացման ծրագիրը կազմված է «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածի համաձայն, որը պիտի ապահովի դպրոցի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը:

Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոցի խնդիրը կրթության որակի բարձրացումն է, որը կապահովի ոլորտի արդյունավետ գործունեության և աշակերտների՝ իրենց ձգտումներին և կարողունակություններին համապատասխան կրթություն ստանալու մատչելիություն՝ պահպանելով համընդհանուր ներառման հիմնական գաղափարներն ու սկզբունքները:

Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոցի զարգացման սույն ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մեթոդաբանական հիմքերն են.

- Դպրոցի ներքին գործունեության 2018-2019, 2019-2020, 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
- «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»
- «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը
- «Երևանի զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագիրը»
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համապատասխան փոփոխությունների (2009թ, 2018թ, 2022թ)
- ՀՀ կրթության մասին օրենք
- ՀՀ Սահմանադրություն
- «Երևան քաղաքի հանրակրթության զարգացման հայեցակարգ» նորմատիվ փաստաթղթի հիմնադրույթները

- Նախորդ 5 տարիների գործունեությունը
- Մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները
- Դպրոցում առկա հիմնախնդիրները

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան: Հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները: ԴԶԾ կազմելու համար ուսումնասիրվել և հստակեցվել են զարգացման ծրագրի համար հիմք հանդիսացող ծրագիրն ու գործառույթների պլանավորումը, դպրոցի առաքելությունը:

«Ծրագիրը» պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը: ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակներն ու խնդիրները սահմանում է «Կրթության զարգացման պետական ծրագիրը»:

Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարվում է գործառույթների պլանավորում, որն անհրաժեշտ միջոցառումների ժամկետների և պահանջվող համապատասխան ռեսուրսները որոշելու, կադրերի պարտականությունները և պատասխանատվությունը սահմանելու, բաշխելու և ծրագրի բյուջեն կազմելու միջոց է: Դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար բաժանվում է հետևյալ փուլերի՝

- ա) Դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրերի, նպատակների և խնդիրների սահմանում
- բ) Ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների կադրային, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում
- գ) Ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում
- դ) Ծրագրի իրականացումն ապահովող պատասխանատուների, ժամկետների հստակ սահմանում


Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոցի ԴԶԾ-ի մշակման համար կատարվել են հետևյալ հաջորդական քայլերը՝

1. սահմանվել է դպրոցի առաքելությունը
2. վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել են եղած հիմնախնդիրները
3. սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները
4. սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները
5. սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները
6. ներկայացվել են զարգացման հիմնական ուղղությունները և ակնկալվող արդյունքները
7. ներկայացվել են դպրոցի զարգացման ծրագրի պլանավորման ժամկետները, հստակ պատասխանատուները
8. ներկայացվել են իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
9. սահմանվել են ակնկալվող արդյունքները և ժամկետները
10. տրվել են արդյունքների գնահատման չափանիշները և վերահսկողության աղբյուրները

Դպրոցի առաքելությունը և զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և նյութատեխնիկական բազան

«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»:

Նելսոն Մանդելա



Դպրոցի առաքելությունը կայուն արժեհամակարգով, վերլուծելու կարողություններով օժտված, առողջ դատողություն, պատասխանատվության զգացում ունեցող, հայրենասեր քաղաքացու ձևավորումն է:

Երևանի Ալ.Շիրվազնադեհի անվան հ.21 հիմնական դպրոցի առաքելությունն է բարենպաստ և մոտիվացնող կրթական միջավայրի ձևավորումը, յուրաքանչյուր սովորողի ֆիզիկական և մտավոր կարողություններից ելնելով ապահովել վերջնարդյունք, որը հնարավորություն կտա ստացած գիտելիքները որպես հմտություններ կիրառել առօրյա կյանքում:

Հիմնական դպրոցի ուսումնառության ավարտին ակնկալում ենք ունենալ հասարակության մեջ համակեցության կանոններին և նորմերին պատասխանատու վարքագիծ դրսևորող, դիմացինի կարծիքները ընկալող, պատճառահետևանքային կապերը վերլուծելու և որոշումներ կայացնելու կարողունակություններ, միջանձնային և միջխմբային հարաբերություններում կոնֆլիկտների խաղաղ լուծման եղանակներ գտնող, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները հարգող և պաշտպանելու ունակություն, հասարակական բոլոր գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններն և իրավունքները գիտակցող, հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն ցուցաբերող, մասնագիտական կողմնորոշում ունեցող քաղաքացի:

ԴԶԾ կազմելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել դպրոցի առաքելությունը, իմանալ ինչ է ծրագիրը և պլանավորումը:

Կրթությունն ու դպրոցը կենդանի օրգանիզմ է, որոնք անընդհատ վերափոխվում է՝ պահելով հնի ոսկեհատիկը՝ վրան փոխպատվաստելով առաջադիմական նորը:

Ժամանակակից կրթությունն այլևս անհնար է պատկերացնել առանց առաջադեմ գաղափարակիր մանկավարժների, առաջադեմ հասարակության, սովորելու ձգտում ունեցող աշակերտների, տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական գործիքակազմի:

ԴՉԾ հիմնական նպատակը

- հիմնական նպատակը դպրոցի զարգացման համար գտնել առաջադեմ, հետաքրքիր, նոր ճանապարհներ
- ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող կրթություն
- ապահովել հավասար և մատչելի կրթություն ստանալու համար անհրաժեշտ միջավայր՝ որդեգրելով պետական քաղաքականությունը որպես հիմք
- ապահովել սովորողների կրթական կարիքներին, հակումներին, ընդունակություններին, կարողունակություններին և նախասիրություններին համապատասխան կրթություն ստանալու հնարավորություն
- ստեղծել համապատասխան պայմաններ օժտված երեխաներին բացահայտելու, հետագայում մասնագիտորեն ճիշտ կողմնորոշվելու հարցում
- նպաստել սովորողի՝ որպես կարողունակ քաղաքացու ձևավորմանը, ազգային արժեքների արժևորմանը և պահպանմանը
- նպաստել համաշխարհային մշակույթին ծանոթ քաղաքացու ձևավորմանը օտար լեզուների ուսուցման միջոցով
- ձևավորել հասարակության տարբեր շեղերին ինտեգրված մասնագիտական հստակ կողմնորոշում ունեցող անհատ՝ պատրաստ սովորելու և աշխատելու ի բարօրություն հայրենիքի արժանապատիվ ապագայի
- ձևավորել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ

Խնդիրները

- հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները, ձևավորել սովորողի՝ անձի զարգացմանը նպաստող կրթական միջավայր
- մեկտեղել առկա ռեսուրսները, համալրել և արդիականացնել նյութատեխնիկական բազան
- բոլոր բնագավառներում, հատկապես ԲՏՃՄ բնագավառում, հաջողություններ գրանցելու համար առաջիկա տարիներին առաջնահերթությունը տալ ՏՀՏ գործիքների, լաբորատորիաների, առարկայական կաբինետների արդիականացմանը և վերազինմանը, գրադարանի թվայնացմանը
- մոտիվացնել ուսուցիչներին որակավորման տարակարգ ստանալուն և կամավոր ատեստավորման մասնակցելուն
- նպաստել սովորողների կրթական, սոցիալական և առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանությանը միտված միջոցառումների ակտիվացմանը

- փնտրել և գտնել ճանապարհներ արտաբյուջետային միջոցների հաշվին դպրոցի ֆինանսական վիճակը բարելավելու համար (ներգրավել շրջանավարտներին, ծնողներին, բարերարներին միջոցներ ներդնելու համար)
- լիցենզիայով սահմանված 865 աշակերտներին միահերթ ուսուցում ապահովելու համար առաջիկա տարիներին հիմնախնդիր դարձնել հին և նոր մասնաշենքերի 4-րդ հարկերի հիմնանորոգումը, ջեռուցման համակարգի մոնտաժումը, մարզական և հանդիսությունների դահլիճների, նկուղի, թաքստոցի բարեկարգումը և վերանորոգումը, մաշված մալուխային համակարգի նորացումը, նոր գույքի ձեռքբերումը, ոռոգման ցանցի ստեղծումը

Ակնկալվող արդյունքները

Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոցի սույն զարգացման ծրագրով նախատեսված հնգամյակի վերջում ակնկալվում է ունենալ

- Հրապուրիչ, ապահով, բարեկարգ կրթական միջավայր
- Աշակերտ-ուսուցիչ-ծնող-համայնք սերտ համագործակցություն
- ԱԽ և ԾԽ ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան գործունեություն
- Վերապատրաստված, նորարար, կարողունակ ստեղծագործ ուսուցիչներ
- Կրթության, դպրոցի, ուսուցչի բարձր հեղինակություն
- Վերապատրաստող առնվազն 5 ուսուցիչներ
- Համընդհանուր ներառական կրթության շարունակականության հաղթահարում
- SՏՏ ժամանակակից, հագեցած նյութատեխնիկական բազա
- Հաստատության ուսումնականության բազայի բարելավում
- Նոր ՀՊԶ-ի պահանջներին համապատասխան որակյալ կրթություն
- Հաստատության շրջանավարտների խորհուրդ
- Արտադասարանական խմբերում սովորողների ընդգրկվածության ավելացում
- Կարողունակ, մրցունակ սովորող- քաղաքացի
- Առարկայական օլիմպիադաների մասնակիցների թվի ավելացում
- Ժամանակակից լաբորատորիաների, մարզադահլիճի, նյութերի, անհրաժեշտ գույքի թվայնացված գրադարանի հագեցվածություն
- Բարոյահոգեբանական, համագործակցող առողջ մթնոլորտ

Վերջնարդյունքը

21-րդ դարի կարողունակ քաղաքացու ձևավորումն է՝ օժտված լեզվական, ինքնաճանաչողական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային, գիտատեխնիկական, մշակութային և տնտեսական կարողունակություններով՝ ի բարօրություն հայրենիքի հզորացմանը:

Վերոնշյալ կետերը իրականություն դարձնելու համար կարևորում են դպրոցում պահպանել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, որտեղ իրենց բարձր առաքելությամբ աշխատանքը կշարունակեն ստեղծագործական և մասնագիտական բարձր կարողունակություններով օժտված մանկավարժներ, հմուտ բազմամասնագիտական թիմ, հզոր ներուժով աշակերտներ, արհեստավարժ վարչատնտեսական կազմ:

1. Ուսումնական հաստատության գործունեությունը

1.1) Հաստատության ուսումնական միջավայրը

Երեխային տվեք հնարավորություն և նա ինքը կբացահայտի իր ձիրքերը: Եթե մեզ հաջողվի կրթական միջավայրը դարձնել գրավիչ, ակնկալվող արդյունքն իրեն երկար սպասեցնել չի տա: Մեր դպրոցն առաջնորդվում է այդ ուղղությամբ՝ վստահ լինելով, որ այսօր ներդրված ջանքերը չափազանց կարևոր են լինելու վաղվա համար:

Ուսումնական հաստատության կարևորագույն նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈւ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Կրթական ներկայիս միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս գուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Ապահովելով վերոնշյալները՝ կարող ենք ունենալ հարմարավետ, տրամադրող, մոտիվացնող ուսումնական միջավայր:

Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրերի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ:

Ուստի, դպրոցի 2023-2028 թվականների զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր, որոնք նպատակաուղղված են ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը:

Դպրոցի գործունեությունը նպատակաուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով՝ կառավարում, ուսումնադաստիարակչական աշխատանքներ, վարչատնտեսական գործունեություն, աշխատանքներ ԿԱՊԿՈւ սովորողների հետ:

Ներքին գնահատման համար կատարված անանուն հարցումն ապացուցում է, որ դպրոցում չկան սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: Սովորողները, ինչպես նաև նրանց ծնողները, համոզված են, որ դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Խստորեն վերահսկվում են բացակայությունները, ճշտվում ախտորոշումները: Պահպանվում են հակահամաճարակային կանոնները: Ախտահանվում են դասասենյակները: Անհրաժեշտության դեպքում, ըստ կարգի, կազմակերպվում է հեռավար ուսուցում:

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թ-ի մայիսի 6-ի N 575-Ն որոշմամբ տրված լիցենզիաների դպրոցը հաստատվել է որպես հիմնական:

Լիցենզիա՝ հիմնական ընդհանուր կրթության իրականացման՝ սերիա N 551, տրված՝ 06.11.2006թ., լիցենզիայի գործունեության ժամկետը՝ անժամկետ:

Համաձայն ՀՀ ԿԳՄՄ նախարարության տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական ընդհանուր՝ 420 սահմանային տեղով /23.04.2013թ. սերիա Ա N0977/
- Հիմնական ընդհանուր 445 սահմանային տեղով /09.07.2021թ. սերիա Ա N1192/





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ (ընդհանուր) ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
(ծրագրի անվանումը)

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍԵՐԻԱ Ա N 1192

Սույնով վավերացվում է, որ
«ԵՐԵՎԱՆԻ ԱԼ. ԾԻՐՎԱՆՉԱԴԵԻ ԱՆՎԱՆ Հ. 21 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպության իրավական ձևը)

Ք. Երևան, Վ. Վաղարշյան փողոց 24
(գտնվելու վայրը)

Ք. Երևան, Վ. Վաղարշյան փողոց 24
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական (ընդհանուր) հանրակրթական ծրագիր
(ծրագրի անվանումը)

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրողը) **Վ. Դումանյան** (անուն, ազգանուն)

 09 հուլիսի 2021 թ.
Կ.Տ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՍԵՐԻԱ ՀԻՄ N 000006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴԻՐ N 001


ՀԻՄՆԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱ Ա N 1192 ԼԻՑԵՆԶԻԱՑԻ

<<ԵՐԵՎԱՆԻ ԱԼ. ԾԻՐՎԱՆՉԱԴԵԻ ԱՆՎԱՆ Հ. 21 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպության իրավական ձևը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ «<09>> ՀՈՒԼԻՍԻ 2021թ. N 1096-Ա/2 ՀՐԱՄԱՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎՈՒՆԲ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ.

N	Կրթական ծրագիրը	Կրթության ձևը	Համակազմի նախատեսվող սահմանային թիվը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Ավարտական փաստաթուղթը
1	Հիմնական (ընդհանուր) հանրակրթական	առկա	445	5 տարի	Գրական հայերեն	վկայական

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման գործակալության պետ

 (ստորագրություն) Կ.Տ.

Ս. Արշակյան
(անուն, ազգանուն)
09 հուլիսի 2021թ.
(ամիս, ամսաթիվ)


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

ԼԻՑԵՆԶԻԱ № 0380

Սույնով վավերացվում է, որ

<<Երևանի Այ. Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց>> ՀՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Ք. Երևան, Վ. Վաղարշյան 24
(գտնվելու վայրը)

Ք. Երևան, Վ. Վաղարշյան 24
(գործունեության իրականացման վայրը)

**Իրավունք ունի իրականացնելու
Նախադպրոցական կրթական ծրագիր**

 **ՆԱԽԱՐԱՐ**
(ամրագրություն)

Լ. Մկրտչյան
(անունը, ազգանունը)

« 31 » **հոկտեմբերի** 2017 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՂԻՐ N 001
ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱ Ա N 0380 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

<<Երևանի Այ. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպատիրական ձևը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ <<31>> ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 թ. N 1237-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՊԱՏԱՆԻՆ Ա ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ.

N	Կրթական ծրագիրը	Հաստատության տեսակը	Տարիքային փուլերը	Համակարգի սահմանային թիվը	Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողությունը	Կրթության ձևը
1.	Նախադպրոցական	մանկապարտեզ	Ավագ նախադպրոցական տարիք	25	գրական հայերեն	1	առկա

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ


 **Կ.Տ.**

Մովսես Մովսիսյան
(անուն, ազգանուն)
31 հոկտեմբերի 2017 թ.
(ամիս, ամսաթիվ)

Հաշվետու ժամանակաշրջանում սովորողների շարժը

2018-2019 ուստարի /դպրոցի ընդունում/			2019-2020 ուստարի			2020-2021 ուստարի		
I	1	24	I	2	59	I	3	74
II	1	34	II	2	37	II	2	63
III	1	29	III	2	57	III	2	38
IV	1	21	IV	2	37	IV	2	64
V	1	27	V	1	31	V	2	45
VI	1	28	VI	1	34	VI	2	43
VII	2	37	VII	1	34	VII	2	37
VIII	1	31	VIII	2	44	VIII	2	42
IX	2	43	IX	1	34	IX	2	44
Ընդ.	11	274	Ընդ.	14	367	Ընդ.	19	450
2021-2022 ուստարի			2022-2023 ուստարի					
I	4	101	I	4	105			
II	3	90	II	4	102			
III	2	73	III	3	87			
IV	2	51	IV	2	68			
V	3	77	V	2	50			
VI	2	54	VI	3	75			
VII	2	50	VII	2	54			
VIII	2	44	VIII	2	52			
IX	2	47	IX	2	42			
Ընդ.	22	587	Ընդ.	24	635			

Տվյալների ամփոփումը գրաֆիկում



Գրաֆիկից հստակ երևում է հաշվետու ժամանակաշրջանում (2018-2023թթ.) սովորողների թվի նկատելի աճը՝ 274-ից /երկու հարյուր յոթանասունչորսից/ հասնելով 635 /վեց հարյուր երեսունհինգի/: Ուստի, կարող ենք ասել, որ կրթական միջավայրը ապահովում է 21-րդ դարի պահանջներին համապատասխան կրթության որակ, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, առողջ մրցակցություն ուսման մեջ. լինել մոտիվացված, առաջատար, հաղթանակող:

Ժամանակի պահանջների թելադրանքով վերակազմավորվել է հաստատության մանկավարժական համակազմը, համալրվել էրիտասարդ և արհեստավարժ մասնագետներով:

Հաստատության տրամադրած կրթության որակը

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:

Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգ ձևավորելու և ցանկալի վերջնարդյունքներ ապահովելու համար: Այս ամենին պետք է նպաստեն արտադասարանական, արտադպրոցական խմբակները, առարկայական նախագծերն ու ուսուցիչների անհատական մոտեցումները: Դպրոցն ունի այդ փորձը և շարունակաբար կիրառելու է էլ ավելի մեծացնելու աշակերտների ձգտումը սովորելու և իրենց սովորածը վերարտադրելու և կիրառելու համար:

Այդ են վկայում առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները, միջին մասնագիտական տարբեր կրթական հաստատություններ, ավագ դպրոցներ ընդունվող սովորողների թիվը:

Դպրոցը, անցած ուսումնական տարում, ապահովել է 100% առաջադիմություն և 48% որակ: Դպրոցի 135 աշակերտներ գերազանցիկներ են, 141-ը՝ հարվածայիններ: Սովորողների 28%-ը ընդգրկված է արտադասարանական, իսկ 90%-ը՝ արտադպրոցական խմբակներում:

Թեև վերջին տարիներին կրթության որակի հիմնախնդիրն առավել շատ քննարկվող հարցերից մեկն է, դպրոցի հիմնախնդիրը շարունակում է մնալ որակական ցուցանիշի իրական բարձրացումը, որը կարտացոլվի առարկայական օլիմպիադաներում մարզային և հանրապետական փուլերում հաջողություններ գրանցելը:

Դպրոցը նախորդ 5 տարիների ընթացքում արձանագրել է հաջողություններ՝ մասնավորապես ուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն, ֆիզիկա, շախմատ առարկաներից՝ մասնակցելով տարբեր մրցույթների և օլիմպիադաների (2-րդ, 3-րդ կարգ):

2022թ. նոյեմբերին դպրոցի աշակերտները մասնակցել են Եվրոպական դպրոցի կողմից կազմակերպված «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ միջոցառմանը՝ գրավելով 1-ին պատվավոր հորիզոնականը:

Դպրոցում գործում են և՛ ուսումնական, և՛ մշակութային, և՛ սպորտային տարբեր խմբակներ

Մենթալ թվաբանություն

Գրական խմբակ

Անգլերենի խմբակ

Դպրոցի հիմնական խնդիրներից մեկը կլինի կրթության որակի վստահելի և արժանահավատ արդյունքային ցուցանիշներ դարձնել ոչ միայն ԿՊԿԼՍ, ԳԹԿ, ԿԶՆԱԿ և այլ կազմակերպությունների կողմից տրված, այլև դպրոցի ներքին գնահատման տվյալները :

Կրթության որակի բարելավումը նախնառաջ ենթադրում է ունենալ որակյալ ուսուցիչներ: Դպրոցում արդեն կան հմուտ ուսուցիչներ, որոնք վերապատրաստումների շնորհիվ էլ ավելի կկատարելագործեն իրենց մասնագիտական հմտությունները: Իհարկե նաև որդեգրելով նոր պետական քաղաքականությունը, պետք է մեծացնել կամավոր աստեսավորման մասնակցող ուսուցիչների թիվը, որի արդյունքում դպրոցը կունենա միանշանակ կրթության որակի ակնհայտ բարձրացում:

Կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Դպրոցի առաջընթացը՝

Սովորողները 2022-2023 ուստարվա ընթացքում մասնակցել են տարբեր նախագծային աշխատանքների, մրցույթների, ծրագրերի.

- «ԿԶՆԱԿ» հիմնադրանի կողմից և Գյումրու թիվ 1 ավագ դպրոցի հետ համատեղ նախաձեռնած «Սասնա ծռեր» էպոսի՝ որպես ազգային բնավորության, հոգեբանության, արժեհամակարգի կարևորությունը վերահաստատելու, էպոսը նորովի բացահայտելու, պահպանելու, արժևորելու, գաղտնագրերը վերծանելու, ուղերձները ընկալելուն նվիրված աշակերտական աշխատաժողովին:
- «Գիտության փառատոն» համադպրոցական զիտաժողով «ԱՅԲ»-ում, զիտահետազոտական աշխատանքների ներկայացում:
- «Ես բնագետ եմ» ամենամյա աշակերտական կոնֆերանսին և ստացել վկայականներ:
- «Պատանի քիմիկոս» մրցույթ

- Համադպրոցական «KOOREZ» ամենամյա մրցույթին և ստացել պատվոգրեր:
- «Իմ դպրոց» կրթական կայքի ամենամյա մաթեմատիկական մրցույթներին և ստացել պատվոգրեր, մրցանակներ, նվերներ:
- «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթին և դարձել մրցանակակիրներ՝ «Լավագույն»-ներ անվանակարգում:
- «Մեղու» հայերենի մրցույթում՝ «Լավագույն» և «Հաղթող» անվանակարգերում:
- «Ֆրանսիական արադադ» ֆրանսիական մրցույթում՝ եզրփակիչ փուլ և գրավել 3-րդ տեղ:
- Թումանյանական օլիմպիադա՝ նվիրված Հովհ. Թումանյանի 100-րդ տարելիցին, 10-ը անցել են հաջորդ փուլ

Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր քննությամբ է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:

Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգը ձևավորելու համար: Այս ամենին պետք է նպաստեն արտադասարանական, արտադպրոցական խմբակները, առարկայական նախագծերն ու ուսուցիչների անհատական և, ինչու չէ նաև, խմբակային մոտեցումները: Դպրոցն ունի այդ փորձը և շարունակաբար կիրառելու է էլ ավելի մեծացնելու աշակերտների ձգտումը սովորելու և իրենց սովորածը վերարտադրելու և կիրառելու համար:

Այդ են վկայում առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները, միջին մասնագիտական տարբեր կրթական հաստատություններ, ավագ դպրոցներ, ընդունվող սովորողների թիվը:

Սովորողների քննական միջին գնահատականները

ԱՌԱՐԿԱ	2021-2022
Հայոց լեզու և գրականություն	20/13
Գրականություն	10/7
Ռուսաց լեզու	10/7
Անգլերեն	10/9
Հայոց պատմություն	10/7
Մաթեմատիկա	20/13
Ֆիզիկա	20/18
Քիմիա	20/13
Կենսաբանություն	20/15
Ֆիզկուլտուրա	10/9

2017-2018 ուստարի	
Գերազանցիկ	86
Բարձր առաջադիմություն	62

2018-2019 ուստարի	
Գերազանցիկ	107
Բարձր առաջադիմություն	71


2019-2020 ուստարի	
Գերազանցիկ	49
Բարձր առաջադիմություն	97

2020-2021 ուստարի	
Գերազանցիկ	113
Բարձր առաջադիմություն	147

2021-2022 ուստարի	
Գերազանցիկ	145
Բարձր առաջադիմություն	138

Ուսուցման որակը վերջին 5 տարիներին

2018-2023թթ.



Աշակերտության 28%-ը ընդգրկված է արտադասարանական, իսկ 90%-ը՝ արտադպրոցական խմբակներում:

Վերջին տարիներին կրթության որակի հիմնախնդիրն առավել շատ քննարկվող հարցերից մեկն է: Դպրոցը նախորդ ուսումնական տարում 100% առաջադիմության հետ ապահովել է 60% որակ:

Դպրոցի կրթության որակի առավել վստահելի ցուցանիշներից կարելի է նշել աշակերտների մասնակցությունն առարկայական օլիմպիադաներին և առանձին մրցույթներին՝ «Մեղու», «Կենգուրու», «Ռուսական արջուկ», «Ոսկե աքաղաղ», «Իմ դպրոց» կրթական կայք, «Մտածող սերունդ», «Живая классика», «Աշխարհն առանց թմրանյութի», «Ես բնագետ եմ» ամենամյա աշակերտական կոնֆերանս, «Գիտության փառատոն» համադպրոցական գիտաժողով, «Մասնա ծոեր» էպոսին նվիրված աշակերտական աշխատաժողով, «Տարվա լավագույն ընթերցող», որտեղ սովորողներն արժանացել են մրցանակների, գրավել պատվավոր տեղեր և այլն: Դպրոցը նախորդ 5 տարիների ընթացքում արձանագրել է հաջողություններ մասնավորապես՝ ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն, ֆիզիկա, շախմատ, ֆիզկուլտուրա առարկաներից՝ մասնակցելով տարբեր մրցույթների և օլիմպիադաների (2-րդ, 3-րդ կարգ):

2022թ. նոյեմբերին դպրոցի աշակերտները մասնակցեցին Եվրոպական դպրոցի կողմից կազմակերպված «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ միջդպրոցական առաջնությանը, գրավեցին 1-ին տեղ:

Կրթության որակի կարևոր ցուցանիշ է նաև շահառուների, այսինքն՝ սովորողների և ծնողների գոհունակությունը, որի ուսումնասիրմանը կանդիդատնանք ստորև:

Դպրոցում գործում են և՛ ուսումնական, և՛ մշակութային, և՛ սպորտային տարբեր խմբակներ

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է ունենալ մասնագիտական բարձր կարողունակություններով օժտված ուսուցիչներ, որոնք այսօր էլ դասավանդում են դպրոցում և վերապատրաստումների շնորհիվ էլ ավելի կատարելագործում իրենց մասնագիտական հմտությունները:

Հետևելով նոր պետական քաղաքականությանը՝ հարկավոր է ապահովել չափորոշային նոր պահանջները, մեծացնել կամավոր աստեսավորման մասնակից ցանկացող ուսուցիչների թիվը: Դրա արդյունքում դպրոցը կունենա կրթության որակի ակնհայտ բարձրացում:

21-րդ դարը թվային տեխնոլոգիաների դար է: Այն գտնվում է ամենօրյա զարգացման փուլում, որից էլ բխում է պահանջը դպրոցը զինել S2S ժամանակակից գործիքակազմով՝ համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ, պլանշետներ, էլեկտրոնային գրատախտակներ:


2020թ. կորոնավիրուսի համաճարակով (Քովիդ-19) պայմանավորված՝ էլ ավելի կարևորվեց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերի իրականացումը և էլեկտրոնային հարթակների կիրառումը:

Ի հայտ եկան անցանց աշխատանքի համար անհրաժեշտ ոչ բավարար հմտություններ և մեղիագրագիտության ցածր մակարդակ, հեռահաղորդակցման տեխնիկական միջոցների բացակայություն, որը այսօր էլ շարունակում է մնալ առաջնային խնդիր: Առաջացած դժվարությունները հաղթահարելու նպատակով դպրոցն իրականացնում է շարունակական գործընթաց ուսումնական ծրագրին ու չափորոշիչներին համապատասխան կրթական ռեսուրսների ստեղծման հարցերի ուղղությամբ:

Նոր չափորոշչային պահանջները ապահովելու նպատակով առաջիկա տարիներին անհրաժեշտ է բարձրացնել կրթության մատչելիությունը և հավասարությունը, որն ամրագրված է Կրթության զարգացման պետական ծրագրում:

Դպրոցը 2008թ.-ից ընդգրկվել է համընդհանուր ներառման պետական ծրագրի մեջ և մինչ օրս իրականացնում է ներառական կրթություն՝ համագործակցելով ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ի (N-3) և բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Դպրոցը բազմիցս միջոցառումներ է կազմակերպել ընդգծելով սովորողների համահավասար իրավունքները հանրակրթության ոլորտում: Ստորև ներկայացնում են համընդհանուր ներառման աստիճանական դինամիկան:

Ներառական աշակերտների թիվ



- 2018-2019 խորը -1, ծանր 4, միջին-3, թեթև-3
- 2019-2020 խորը -1, ծանր -4, միջին-9, թեթև-3
- 2020-2021 խորը -1, ծանր -3, միջին-9, թեթև-2
- 2021-2022 խորը-1, ծանր -3, միջին-9, թեթև-3
- 2022-2023 խորը-1, ծանր -3, միջին- 5, թեթև-2

Կրթական որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.

- Թեմատիկ պլանները կազմվում են պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան
- Մեթոդմիավորումների կողմից վերահսկվում են պլանների կատարումը, որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը
- Կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ
- Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքները

- Յուրաքանչյուր սովորողի համար բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր
- Սովորողների առաջադիմության մասին զեկուցվում է մեթոդմիավորումների նիստերին, քննարկվում առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը
- Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը
- Դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ

1.2 Ուսումնական հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը կրթական գործունեությունն իրականացնում է ի նպաստ անհատի. հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ստեղծում պայմաններ ինքնակրթության և լրացուցիչ կրթական կարիքների բավարարման համար:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա: Դպրոցը պատասխանատու է պետական չափորոշիչներին, հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

Դպրոցի ձեռքբերումներից է Արաբկիր վարչական շրջանում մենթոր դպրոց դառնալը: Ելնելով դպրոցավարության ճիշտ քաղաքականությունից, 2023թ. հաստատությունը դարձել է մենթոր դպրոց՝ տնօրեն Արուսյակ Բաղդասարյանի ղեկավարությամբ:

Դպրոցը գտնվում է ք. Երևան, Արաբկիր վարչական շրջանի Վ.Վաղարշյան 24 հասցեում: Համագործակցությունը համայնքի հետ նպատակ է հետապնդում.

- Ակտիվացնել ծնողխորհրդի գործունեությունը
- Մասնակցել ծնողխորհրդի նիստերին, հանդես գալ առաջարկություններով
- Խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացումը
- Խթանել, ակտիվացնել աշակերտական խորհրդի աշխատանքը
- Մասնակցել աշակերտական խորհրդի նիստերին, հանդես գալ առաջարկություններով
- Աջակցել աշակերտական խորհրդին իր նախաձեռնություններում


Մերտ է դպրոցի կապը և համագործակցությունը ծնողհամայնքի հետ:

Դպրոցն ակտիվորեն համագործակցում է և կատարում է ԿԳՄՍ նախարարության, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության, ԿԶՆԱԿ-ի,

ԳԹԿ-ի, Կրթության տեսչական մարմնի, ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ի և կրթության կառավարման այլ մարմինների հանձնարարականները:

Դպրոցը մասնակցում է համայնքի միջոցառումներին, համագործակցում է Արաբկիր վարչական շրջանի հետ: Համագործակցում է նաև ներքոգրյալ կազմակերպությունների և ուսումնական կենտրոնների հետ.

- ԿԶՆԱԿ
- ՏՄԱԿ
- ՀՄԿ
- Save the children, «Կարմիր խաչ»
- ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա
- ՄԻՊ
- Երևանի Արաբկիր վարչական շրջանի Ոստիկանության բաժին
- ՀՀ ԱԻՆ ՍՊՏԾ
- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն
- «Իմ դպրոց» կրթական կայք
- KOREEZ կրթական կենտրոն
- Հանրային ռադիո
- «Նոնենի» ծերատուն
- Գրատուն – հրատարակչություններ՝ «Զանգակ», «Էդիթ» պրինտ, «Անտարես»
- ՄՀԿ (Մանկապատանեկան հանրապետական կենտրոն)
- Երևանի պետական մանկավարժական համալսարան
- Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան
- Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ
- Եվրասիա ավագ դպրոց – վարժարան
- Հայաստանի շախմատի ակադեմիա
- Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան
- Պատմամշակութային կառույցներ՝ (տուն-թանգարաններ, թանգարան-ինստիտուտներ, պատկերասրահներ, համերգասրահներ, գրադարաններ)
- Дом Москва



1.3 Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները (S2S տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները)

Ուսումնական հաստատության շենքային պայմանները

Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոցը հիմնադրվել է Արաբկիրում 1928թ. Կոմիտաս 15 հասցեում: 1934թ. անվանակոչվել է հայ դասական գրող Ալեքսանդր Շիրվանզադեի անվամբ: 1963թ.-ից դպրոցն իր գործունեությունը շարունակել է նոր հասցեում՝ Վաղարշ Վաղարշյան 24: 1982թ. կառուցվել է դպրոցի 2-րդ մասնաշենքը:

2003թ. հունվարի 17-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում /գրանցման համար 264.210.06109, վկայական՝ N 23062021-01-0295/, գտնվելու վայրը ՀՀ քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Վաղարշ Վաղարշյան 24 հասցեում: Դպրոցի կանոնադրությունը՝ որպես ՀՀ Երևանի մարզի «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, հաստատվել է 2003թ. հունվարի 17-ին: Սույն կանոնադրության փոփոխություններ են գրանցվել 2020թ. հոկտեմբերի 19-ին /N 3271-Ա որոշմամբ/:

Դպրոցի անվանումն է՝

2. Հայերեն լրիվ՝ «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան N21 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
3. Հայերեն կրճատ՝ «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան N21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
4. «Ереванская основная школа N21 имени Ал.Ширванзаде» государственная некоммерческая организация.
5. «Ереванская основная школа N21 имени Ал.Ширванзаде» ГНО
6. «Yerevan Basic school N21 Named by Al.Shirvanzade» State Non Profit Organization
7. «Yerevan Basic school N21 Named by Al.Shirvanzade» SNPO

Դպրոցը հաստատվել է որպես հիմնական ՀՀ կառավարության 2010 թ-ի մայիսի 6-ի N 575-Ն որոշմամբ:

Լիցենզիա՝ հիմնական ընդհանուր կրթության իրականացման՝ սերիա N 551, տրված՝ 06.11.2006թ., լիցենզիայի գործունեության ժամկետը՝ անժամկետ:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական ընդհանուր՝ 420 սահմանային տեղով /23.04.2013թ. սերիա Ա N0977/
- Հիմնական ընդհանուր 445 սահմանային տեղով /09.07.2021թ. սերիա Ա N1192/
 - Ծրագրի անվանումը՝ հիմնական (ընդհանուր) հանրակրթական ծրագիր
 - Հաստատության տեսակը՝ հիմնական հանրակրթական դպրոց
 - Իրականացվող ծրագրերի աստիճանները՝ առաջին, երկրորդ՝ հիմնական հանրակրթական
 - ՀՎՀՀ 00031473
 - Հ/Հ՝ 900018004516

Սպասարկող բանկը՝ աշխատակցի ընտրությամբ

Դպրոցի շենքը՝ տիպային

Հզորությունը՝ 865 աշակերտ-տեղ

Հեռախոս՝ +374 010 22-31-10, 093 54-99-44

Հասցե՝ ՀՀ Երևանի մարզ, Արաբկիր վարչական շրջան, Վաղարշ Վաղարշյան 24

- Պաշտոնական կայք՝ www.school21.safe.am
- Սոցիալական հարթակ՝ <https://www.facebook.com/school21>
- Էլեկտրոնային հասցեներ՝ school21@schools.am, shirvanzade21@yahoo.com

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝

«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):

Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով

Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի:

Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու, հետևողականորեն վերլուծություններ կատարելու և հանրակրթության բոլոր պահանջները կատարելու համար:

Ուսումնական հաստատության ընդհանուր նկարագիրը

Հաստատության անվանում՝ Ալեքսանդր Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Վ.Վաղարշյան 24

Հարկայնություն 4

Շենքը՝ տիպարային

Մասնաշենքերի քանակ 2

Տարածքի մակերես 5985,7²

Շենքի մակերես- 6881մ², (930մ² տրված է վարձակալության)

Դպրոցի հիմնադրման տարեթիվ՝ 1928թ., գործող հասցեն՝ Կոմիտաս 15

Կառուցման տարեթիվ նոր հասցեում՝ Վաղարշ Վաղարշյան I մասնաշենք՝ 1963թ., II մասնաշենք՝ 1982թ.

Ելքերի քանակ. հիմնական՝ 5, պահեստային՝ 3

Հերթայնություն 1

Նախագծային հզորություն (աշակերտ) 865, նախակրթարան՝ 25 (սան)

Սովորողների թիվ 617

Աշխատակիցների ընդհանուր թիվ 67

Տնօրեն՝ Արուսյակ Ժոզեֆի Բաղդասարյան, բջջ. 093 54 99 44

Ընդունարան հեռ. 010 22 31 10

Շինության տիպը՝ A- քարե շարվածքից կրող պատեր, կոմպլեքսային կոնստրուկցիա

Պարսպի /ցանկապատի/ տեսակը՝ մոնոլիտ

Պարսպի /ցանկապատի/ երկարությունը՝ 88մ, բարձրությունը՝ 1,5մ

Մեյսմիկ անվտանգություն՝ 7 բալ

Աշխարհագրական դիրքը՝ հարթավայրային

Մահմանային դիրքը՝ ոչ սահմանային

Կրթական ծրագրի աստիճան՝ հիմնական

Կրթական ծրագրի տեսակը՝ ընդհանուր
 Պաշտոնական կայք՝ www.school21.safe.am
 Սոցիալական հարթակ՝ <https://www.facebook.com/21dproc>
 Էլեկտրոնային հասցեներ՝ school21@schools.am, shirvanzade21@yahoo.com
 Նշված էլեկտրոնային հղումները սույն ԴԶԾ ծրագրում առկա տեղեկատվության հավաստիությունը ճշտելու համար են:

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Հ/հ	Շինությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը (մ/քառ)	Ծավալը (մ/խոր)
1.	Շենք շինություն	2	6881մ ²	20643
2.	Շինությունների հարկերի քանակ	4		
3.	Դասասենյակներ	45	2250մ ²	6750
4.	Ուսուցչանոց	1	78,2 մ ²	
5.	Առարկայական կաբինետներ	-	-	-
6.	Համակարգչային դասասենյակ	1	100 մ ²	
7.	Լաբորատորիաներ	3	214,4մ ²	643,2
8.	Զինապահոց	1	12մ ²	
9.	Մարզադահլիճ	2	301մ ²	
10.	Հանդերձարան(ներ)	4	101,8մ ²	
11.	Մարզադաշտ	1	900մ ²	
12.	Վագրուդի	1	58մ ²	
13.	Գրադարան	1	100մ ²	300
14.	Գրապահոց	1	16մ ²	48
15.	Գրադարանային ֆոնդ	7693 գիրք		
16.	Բուժկետ	1	33,7մ ²	101,1
17.	Սանհանգույց(ներ)	12	155մ ²	465
18.	Թեքահարթակ	1	45°	
19.	Համակարգիչներ	16		
20.	Նոութբուք	3		
21.	Էլեկտրոնային գրատախտակ(ներ)	2		
22.	Պրոյեկտոր	3		
23.	Բազմաֆունկցիոնալ սարք (տպիչ, ծրիչ, պատճեն)	2		
24.	Տպիչ սարք	1		
25.	Ինտերնետային կապ	առկա		
26.	Հեռախոսներ	2		
27.	Ջեռուցվող տարածք(ներ)	2	5004մ ²	
28.	Ջեռուցման տեսակը (լոկալ)	31641խմ	5004մ ²	28975
29.	Ջեռուցման օրերը	140		
30.	Շենքերի ներսի մաքրվող մակերես	-	1669մ ²	
31.	Շենքերի դրսի մաքրվող մակերես(ներ)	-	861,4մ ²	
32.	Սանհանգույց(ներ)ի մաքրվող մակերես	12	91մ ²	


Հաստատության նյութատեխնիկական բազայի և այլ ռեսուրսների համեմատական նկարագրություն հաշվետու ժամանակաշրջանում

Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում
/համեմատական/


	2018թ. /հազար դրամ/	2023 /հազար դրամ/	ավելացել է /հազար դրամ/
Հիմնական գույք	19844,6	32558,9	12714,3
Շրջանառու գույք	4178,8	14225	10046,2
Ընդամենը	24023,4	46783,9	22760,5

Նյութատեխնիկական բազայի և այլ ռեսուրսների հաշվեկշռային արժեքի փոփոխությունը

Հիմնական գույք



Շրջանառու գույք



2018-2023թթ. ընթացքում կատարված աշխատանքները
**Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հաստատության շենք-
շինությունների վերանորոգման և պահպանման աշխատանքներ, նյութատեխնիկական
բազայի հարստացում**

- 2018թ. հուլիս-օգոստոս ամիսներին բարերարի կողմից մասնակի վերանորոգվել է դպրոցի տանիքը (730մ²), քիվերն ու ջրհորդանները
- 2018թ. նոյեմբերին ամբողջությամբ փոխվել է հանդիսությունների դահլիճի բեմի վարագույրները (120մ)
- 2018թ. նոյեմբերին հանդիսությունների դահլիճի համար ձեռք են բերվել 40 գրասենյակային աթոռներ (նվիրատվություն)
- 2019թ. նոր մասնաշենքի երրորդ հարկի մանրահատակը փոխարինվել է սալիկներով (300մ²)
- 2019թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին հիմնանորոգվել է 2 սանհանգույց
- 2019թ. հին մասնաշենքի երկրորդ հարկի դասասենյակների դռների փոխարինումը եվրոդռներով թվով 12 դուռ
- 2020թ. հունիս-օգոստոս ամիսներին հին մասնաշենքի երկրորդ հարկի սալիկապատում կերամոզրանիտով (300մ²), ամբողջ երկրորդ հարկի միջանցքի հիմնավոր վերանորոգում, լույսերի փոխարինումը լեդ լուսավորությամբ, դասասենյակների հիմնանորոգում, ուսուցչանոցի կապտալ վերանորոգում, կահավորում (գրասենյակային պահարաններ, աշխատասեղաններ, խորհրդակցությունների մեծ սեղան, բազմոցներ, գրասենյակային աթոռներ), երկու սանհանգույցների հիմնանորոգում՝ ժամանակակից հարմարեցումներով, դասասենյակների և ուսուցչանոցի գալարավարագույրների ձեռքբերում (70,4մ²)
- 2020թ. սեպտեմբերին նկուղային հարկի վիտրաժային դռների տեղադրում
- 2020թ. դեկտեմբերին հին մասնաշենքի երրորդ հարկի դասասենյակների դռների փոխարինումը եվրոդռներով թվով 12 դուռ
- 2021թ. հունիսին սպորտային դահլիճի միջանցքների հատակի սալիկապատում կերամոզրանիտով, պատերի հիմնանորոգում, մալուխների և լույսերի փոխարինում նորով՝ լեդ լուսավորություն, դռների փոխարինում եվրոդռներով թվով 9 դուռ, հանդերձարանների կոսմետիկ վերանորոգում
- 2021թ. հունիսին հանդիսությունների և սպորտային դահլիճների լուսամուտների փոխարինում եվրոլուսամուտներով (128մ²)
- 2021թ. օգոստոսին հանդիսությունների դահլիճի նոր շերտավարագույրների ձեռքբերում (50,40մ²)
- 2021թ.- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության կողմից դպրոցին նվիրաբերվել է հրդեհաշիջման անհրաժեշտ գործիքների վահանակ, 2023թ. դպրոցը համալրվել է 7 կրակմարիչներով
- 2022թ. հունվարին նկուղային հարկի պատուհանների փոխարինում եվրոպատուհաններով
- 2022թ. օգոստոսին մարզադահլիճի հատակի ներկի թարմացում
- 2022թ. հոկտեմբերին նոր մասնաշենքի երրորդ հարկի միջանցքների վիտրաժային դռների տեղադրում
- 2022թ. նոյեմբերին MOEFF GROUP արտադրության 5 ջրախնայող, ստերեիլիզացման համակարգով աշխատող ցայտաղբյուրների տեղադրում միջանցքներում
- 2018-2023 հաշվետու տարիների ընթացքում աշակերտական, ուսուցչական գույքի, եռափեղկ գրատախտակների շարունակական ձեռքբերում (23), մարզագույքի, երաժշտական

գործիքների, ինչպես նաև լաբորատոր կաբինետների դիդակտիկայի թարմացում, շինգործիքների էլեկտրաեռակցող սարք, էլեկտրական սղոց 2019-2023 հաշվետու տարում ձեռք են բերվել 3 դյուրակիր համակարգիչներ, 1 մոնիտոր, 1 էլեկտրոնային գրատախտակ, 1 պրոեկտոր, անվտանգության թվով 9 տեսախցիկներ: 2018-2023թթ. հաստատությունում իրականացվել է 38031,4 մլն ՀՀ դրամ արժողությամբ վերանորոգում:

Նյութատեխնիկական բազա

Դպրոցն ունի տիպային լաբորատորիա 1 /քիմիա, ֆիզիկա (64.69մ² մակերեսով), կենսաբանություն, աշխարհագրություն (50մ² մակերեսով):

Բոլոր լաբորատորիաները ապահովված են գույքով (հիմնադրման օրվանից չեն արդիականացվել, հնամաշ են) :

Քիմիայի լաբորատորիան 2022թ. հուլիս-օգոստոս ամիսներին հիմնանորոգվել է՝ ստեղծվել է 21-րդ դարի պահանջներին համապատասխան դասասենյակ-լաբորատորիա, փոխվել են ջրագծերը, սալիկապատվել են պատերն ու հատակը, հատկացվել են հատուկ տեղեր թվով 8 ծորակներով փորձասեղանների համար, որոնք հնարավորություն կտան գործնական պարապմունքներն իրականացնել տեղում՝ համապատասխանելով ժամանակակից չափորոշիչի պահանջներին:

Նախահաշվով նախատեսվում է ձեռք բերել համապատասխան գույք՝ քարշակ-պահարան, ցուցադրական աշխատասեղան, աշակերտական փորձասեղաններ՝ ծորակով և վացարանով:

Լաբորատորիան ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, ձեռք են բերվել փորձերի համար անհրաժեշտ նյութեր և անվտանգությունն ապահովող սարքավորումներ:

Կարևորելով ՏՀՏ-ի դերը նախատեսվում է 2023-2028 թթ. հիմնանորոգել մյուս լաբորատորիաները, ապահովել համապատասխան գույքով և համակարգչային համապատասխան տեխնիկայով՝ վիրտուալ փորձերի տեսական և ինտերակտիվ մասը զուգակցելու և արդյունավետ համակցված դասեր կազմակերպելու նպատակով:

Դպրոցն ունի հարուստ գրադարան, որի ֆոնդը կազմում է 7693 կտոր գրականություն (ուսումնամեթոդական, տեխնիկական, ծրագրային, գեղարվեստական և այլն):

Հաստատությունն ապահովված է վարձակալության հիմունքներով աշակերտներին տրամադրվող հոսքային անհրաժեշտ 6795 կտոր դասագրքով (1279540 դրամ):

Դպրոցում գործում են ինտերակտիվ ուսուցման դասասենյակներ՝ ինտերակտիվ գրատախտակ-պրոյեկտորներով (1 ինտերակտիվ գրատախտակ-պրոյեկտորը իր դյուրակիր համակարգչով ձեռք է բերվել 2023 թվականին): 2018-2023 թթ. ձեռք է բերվել 3 դյուրակիր համակարգիչ (նոութբուք), 1 մոնիտոր: Տեղադրվել է անվտանգության համակարգ՝ 9 տեսախցիկով (ելքային մուտքեր, միջանցքներ, բակ):

Համակարգչային կաբինետը համալրված է 16 (տասնվեց) Pentium (R) Dual-Core CPU համակարգիչներով, տպիչներով (3), ԿՏԱԿ-ի կողմից անվճար տրամադրված գերարագ ինտերնետով:

Տե՛ս հաշվետվության ձևաչափին կցված հաստատության նյութատեխնիկական բազայի ցուցակը

h/h	Հիմնական միջոցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Քանակը	Մկգբնական արժեքը	Հաշվեկշռային /մնացորդային/ արժեքը
		3	4	5	6
1	Նկարներ հեքիաթային կերպարներով	1970	32	18914	
2	Գեղ. նկար հեքիաթ <<Մաշինկան և արջը>>	1982	2	2944,0	
3	Գեղ. նկար հեքիաթ <<Շողգամ>>	1981	1	1472,0	
4	Գեղ. նկար հեքիաթ <<Մատնաչափիկը>>	1981	2	2872,0	
5	Գեղ. նկար հեքիաթ <<Տելեմոկ>>	1981	1	1472,0	
6	Գեղ. նկար <<Կարպի գյուղ>>	1981	1	1308,0	
7	Նկար-հեքիաթ <<Մուկն ու կատուն>>	1981	1	1472,0	
8	Նկար-հեքիաթ <<Փիղը>>	1981	1	808,0	
9	Նկար-հեքիաթ <<Երեք խողովները>>	1981	1	808,0	
10	Նկար-հեքիաթ <<Բժիշկ Այբոլիտը>>	1981	1	1472,0	
11	Նկար-հեքիաթ <<Մատնաչափիկն ու արջը>>	1981	1	1150,0	
12	Նկար-հեքիաթ <<Հավիկն ու ձվիկը>>	1981	1	1150,0	
13	Նկար-հեքիաթ <<Ոսկե ձվիկը>>	1981	1	1472,0	
14	Նկար-հեքիաթ <<Ճպտուն ու վրջունը>>	1981	1	1960,0	
15	Նկար-հեքիաթ <<Մատնաչափիկը>>	1981	1	1960,0	
16	Նկար-հեքիաթ <<Փիղը վանդակում>>	1981	1	1960,0	
17	Գեղ. նկար <<Գյուղ-գետակ>>	1982	1	1472,0	
18	Գեղ. նկար <<Պեյզաժ>>	1982	1	10304,0	
19	Գեղ. նկար <<Գյուղ-գարուն>>	1982	1	1750,0	
20	Գեղ. նկար <<Միրամարզի փետուր>>	1982	1	1750,0	
21	Գեղ. նկար <<Նատյուրմորտ>>	1982	1	1724,0	
22	Գեղ. նկար <<նատյուրմորտ վարդ>>	1982	1	1724,0	
23	Գեղ. նկար <<Կարպի գյուղ>>	1982	1	1304,0	
24	Գեղ. նկար <<Սարի տնակ>>	1982	1	1750,0	
25	Գեղ. նկար <<Սարեր-լեռներ>>	1982	1	1460,0	
26	Գեղ. նկար <<Կեսօր>>	1982	1	1724,0	
27	Գեղ. նկար <<Տներ Գորիսում>>	1982	1	1724,0	
28	Գեղ. նկար <<Բնական>>	1982	1	1960,0	
29	Գեղ. նկար <<Գոմեր>>	1982	1	1960,0	
30	Գեղ. նկար <<Կեսօրից հետո>>	1982	1	1708,0	
31	Գեղ. նկար <<Մանուկներ>>	1982	1	1460,0	
32	Գեղ. նկար <<Նատյուրմորտ վարդ>>	1982	1	1960,0	
33	Գեղ. նկար <<Պտղնի>>	1982	1	1734,0	
34	Գեղ. նկար <<Բեկորատիվ ծառեր>>	1982	1	1734,0	
35	Գեղ. նկար <<Ծովափ>>	1982	1	1708,0	
36	Գեղ. նկար <<Մաղմուսավանք>>	1982	1	1960,0	
37	Գեղ. նկար <<Կորովկով>>	1982	1	1960,0	
38	Հեքիաթ-նկար <<Երեք խոզուկները>>	1981	1	1960,0	
39	Գորելեն	1980	3	12972,0	
40	Գորելեն մեծ	1980	1	3604,0	
41	Երկաթյա պահարան	1983	1	9043,0	
42	Պահարան	1976	20	213444,0	
43	Պահարան սեկց.	1976	10	103603,0	
44	Ծաղկաման կերամիկա	1982	5	362157,0	
45	Ծաղկաման կերամիկա փոքր	1982	6	86891,0	
46	Որմնակահույք	1985	2	86587,0	

47	Ղաշկամուր <<Կոմիտաս>>	1983	5	131670,0	
48	Բազմոց բազկայթոռ	1978	03.фев	151421,0	
49	Սեղան-աթոռ մետաղյա հիմքով	1987	10	9317,0	
50	Գորգ բազկայթոռի	1981	6	37191,0	
51	Գորգ 1.5 x 2	1981	3	66374,0	
52	Գորգ <<Էրեբունի>> 3 x 4	1981	4	318780,0	
53	Գորգ 2.5 x 3	1981	7	278971,0	
54	Շերտավարագույր	2013	50քմ	300000,0	180000,0
55	Մետաղյա գրադ.	1975	18	1940,0	
56	Սեղան ինֆորմատիկա	1998	10	2347,0	
57	Սեղան գծագրական	1981	26	1781,0	
58	Լրագրասեղան	1981	1	115,0	
59	Աթոռ փափուկ	1990	4	201,0	
60	Աթոռ կ/փ	1989	10	300,0	
61	Գրատախտակ	1981	40	3538,0	
62	Կախիչ մետաղական	1975	2	192,0	
63	Աշակերտական նստարան	1980	81	7212,0	
64	Չիրկիզվող պահարան	1982	6	1260,0	
65	Պահարանիկ	1981	3	130,0	
66	Հեռ. ապարատ	2001	1	3957,0	
67	Սեղան ուսուցչական 1 պահարանով	1982	40	6086,0	
68	Լաբ. սեղան	1978	34	6557,0	
69	Բազկայթոռ կաշվե	1982	40	4471,0	
70	Աթոռ մետաղյա հիմքով	1970	400	10303,0	
71	Սեղան մետաղյա հիմքով	1980	200	7800,0	
72	Պահարան	1978	36	11600,0	
73	Սեղան ուս.	1982	60	7812,0	
74	Աթոռ բուֆետի	1987	31	1119,0	
75	Աթոռ թատ.	1980	135	24289,0	
76	Չիրկիզվող պահարան	1980	1	76,0	
77	Աթոռ ծայովի	1991	6	282,0	
78	Սեղան-աթոռ մետաղյա հիմքով	2005	21	424127,0	
79	Կնիք	2012	1	8000,0	5600,0
80	Դրոշմակնիք	2012	1	5000,0	3500,0
81	Աշակերտական սեղան, աթոռ	2016	26	780000,0	780000,0
82	Հեռ. ապարատ	2004	2	15255,0	
83	Երկայթյա պահարան	1983	2	4774,0	
84	Սեղան մետաղյա հիմքով	2003	45	776250,0	
85	Աթոռ մետաղյա հիմքով	2003	90	517500,0	
86	Սեղան 2 պահարանով	2001	4	32000,0	
87	Երկայթյա պահարան	2001	6	30000,0	
88	Սեղան լաբ. 1 տեղ.	2001	18	63000,0	
89	Աթոռ կաշվե	2001	10	30000,0	
90	Լուսամփոփ	2001	2	36000,0	
91	Աթոռ կոշտ կարմիր	2001	40	10000,0	
92	Աշակերտական սեղան-նստարան 1 տեղանոց	2001	18	7200,0	
93	Բազկայթոռ	2001	1	5000,0	
94	Գրքի ցուցադրական պահարան	2001	1	1200,0	
95	Գրադարակ	2001	2	1000,0	
96	Սեղան համակարգչային	2003	10	285000,0	
97	Աթոռ համակարգչի	2003	10	256500,0	
98	Սեղան-աթոռ մետաղյա հիմքով	2007	90	3150030,0	1222230,0
99	Գրատախտակ	2007	10	199900,0	79960,0
100	Գրապահարան	2007	10	409300,0	
101	Ուսուցչի սեղան	2007	5	204300,0	102150,0
102	Աշակերտական սեղան	2007	35	698375,0	219925,0
103	Աշակերտական աթոռ անհատական	2007	70	507500,0	

104	Պահարան	2007	5	239180,0	
105	Խարային կյոռ սեղան	2007	5	101110,0	40844,0
106	Ուսուցչի սեղան	2007	3	114025,0	91220,0
107	Գրատախտակ	2008	5	108440,0	
108	Փոքր պոռո	2008	34	76760,0	
109	Ցուցանակ /դպրոցի անվ./	2008	1	60000,0	48000,0
110	Կրակմարիչ	2008	7	60000,0	48000,0
111	Ուսուցչի պոռո	2008	2	21840,0	
112	Կահույք	2008	2	67200,0	
114	Փակ պահարան	2009	2	73000,0	
115	Բաց պահարան	2009	3	84000,0	
116	Հատուկ սեղան	2009	3	90000,0	
117	Կախիչ	2009	1	30000,0	24000,0
119	Ջահեր	1982	4	10472,0	
120	Հասակաչափ	1980	1	48,0	
121	Կշեռք	1980	1	178,0	
122	Բժշկական սեղան	1980	1	100,0	
123	Բիքս	1979	1	63,0	
124	Թախտ բժշկական	1980	1	134,0	
125	Էկրան	1981	1	19,0	
126	Հենարան	1982	2	38,0	
127	Տիրի հր.	1988	1	115,0	
128	Նկարներ 4-6-10	1989	6	103,0	
129	Քաղ.պաշտպանության ցուցանակ	1988	1	3157,0	
130	Զինվորական երրում	1983	1	215,0	
131	Սանիտարական պայուսակ	1988	2	127,0	
132	Հրացանի մակեւ	1983	1	89,0	
133	Հակագազ	1985	260	6237,0	
134	Հրամանատարի արկղ	1982	1	280,0	
135	Ավտոմատի մակեւ	1982	18	400,0	
136	Ռազմական հագուստ	1987	1	423,0	
137	Ռազմական թիկնոց	1987	2	512,0	
138	Նոնակի պայուսակ	1982	20	346,0	
139	Նոնակի շապիկ	1982	10	154,0	
140	Եռտանի	1982	1	385,0	
141	Սեղան մետաղական	1980	13	1070,0	
142	Մամակ	1980	20	1155,0	
143	Մարմն. կտարան	1985	18	1663,0	
144	Բարձրացատկի ձող	1982	1	157,0	
145	Վայրկյանաչափ	2003	1	7000,0	
146	Շվեդական պատ	1981	2	500,0	
147	Կանգնակ	1981	1	335,0	
148	Արգելք	1981	1	615,0	
149	Սեղկա վ/բ	1989	2	340,0	
150	Սեղան	1982	1	270,0	
151	Կամրջակ	1993	1	37000,0	
152	Շախմատ	2003	4	21678,0	
153	Բասկետբոլի օղ	1983	2	85,0	
154	Նոնակ	1982	5	60,0	
155	Պարան	1998	3	36196,0	
156	Ցատկապարան	2003	5	9000,0	
157	Ուժաչափ	2003	2	12000,0	
158	Բրուսյա	1978	1	15000,0	
159	Գերան	1978	1	14491,0	
160	Բ/բ շիթ պլաստմասե	1980	1	22792,0	
161	Հանտեղ	2008	1	17500,0	
162	Էսպանոլեո	2008	2	10500,0	
163	Դազգահ փայտի	1980	9	950,0	
164	Հպելի	1980	1	110,0	

165	Մանեկեն	1980	4	308,0	
166	Գրպլ թեյի	1985	12	32,0	
167	Պատարաբաղ	1985	10	27,0	
168	Բաժակակալ	1982	9	79,0	
169	Արդուկի սեղան	1992	1	125,0	
170	Կարի մեքենա ոտքի	1978	1	5428,0	
171	Գլոբուս	2008	2	6120,0	5508,0
172	Ցուցանակ	2011	1	35000,0	31500,0
173	Տարրական դասարանի սեղան, աթոռ (շախմատի)	2011	18	449820,0	
174	Կաշվից ծալովի աթոռներ	2015	20	220000	198600
175	Կրակմարիչ	2015	4	45000	45000
176	Գրատախտակ	2015	2	60000	54000
177	Աշակերտական սեղան 2 աթոռով	2021	25 կոմպլեկտ	39500	987500
178	Կավճամագնիսային գրատախտակ եռափեղկ	2019	10 հատ	98000	980000
179	Կավճամագնիսային գրատախտակ	2022	7 հատ	130000	910000
180	Բազմոց	2022	3 հատ	178000	534000
181	Աթոռ կաշվեպատ	2022	12 հատ	28000	336000
182	Գրապահարան ապակիներով և փակ դռներով	2022	1 հատ	125000	125000
183	Ինտերակտիվ գրատախտակ	2023	1 հատ	985000	985000
184	Անվտանգության համակարգ	2023	1	995000	995000

դրամ

